ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջանի համայնքի հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի կառուցապատման իրավունքի մրցույթ

ԼՈՏ-ի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը՝ քմ	Հողամասի նպատակային գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների առկայության մասին տվյալներ	Ջրատարի,կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Հողամասի տրամադրման ժամկետը	Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /սակարկվող/ դրամ
Լոտ 6/ՔԿ-26/	ք. Դիլիջան, Պարզ լճի փ. 21/3	11-003-0675-0108	1184,2	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	թեթև կոնստրուկցիաներով շինությունների կառուցման	չկան	առկա է	առկա են մինչև 100մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	մինչև 2075թ. դեկտեմբեր 31-ը	94 736
Լոտ 7/ՔԿ-26/	ք. Դիլիջան, Պարզ լճի փ. 19/11	11-003-0675-0109	3881,1	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	թեթև կոնստրուկցիաներով շինությունների կառուցման	չկան	առկա է	առկա են մինչև 100մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	մինչև 2075թ. դեկտեմբեր 31-ը	310 488

Մրցույթի հաղթողը պարտավոր է առաջնորդվել տվյալ մրցութային փաթեթին կցված ճարատարապետահատակագծային առաջադրանքով: Հողամասում իրացման ենթակա կառույցներ չկան:
Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի տրամադրման պայմաններին, գրաֆիկական նյութերին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնում՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին մրցույթի մասնակցության վճարի՝ 50000 դրամի մուծման անդորրագիր:
Մրցույթի մասնակիցները մրցույթի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի տարեկան վճարի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Եթե մասնակիցը մրցույթի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է տարեկան վճարի գնի մեջ: Մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ և տարեկան վճարի ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողօգտագործման իրավունքի այլ սուբյեկտներ:
Մրցույթի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովին՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:
Մրցույթը կայանալու է 2026թ. օգոստոսի 24-ին ժամը 10.30-ին, Դիլիջանի համայնքապետարանի 3-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:
Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2026թ. օգոստոսի 18-ը, ժամը 18.00: